ՊԱՏՄԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ
ИСТОРИКО-КУЛЬТУРНЫЕ ОЧЕРКИ

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՀՌՉԱԿԱՎՈՐ ՀՌԵՏՈՐ ՊՐՈՀԵՐԵՍԻՈՍ-ՊԱՐՈՒՅՐ ՀԱՅԿԱԶՆԸ

Մ. Գ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

Հայաստանում, դեռևս Տիգրան Մեծի ժամանակաշրջանում, շատ հարգի է եղել հռետորական արվեստը։ Հելլենիստական մշակույթի ազդեցությամբ կատարվել են դրական տեղաշարժեր, այդ թվում նաև ճարտասանության ոնադավառում։ Բացվել է թատրոն, կազմակերպվել են ճարտասանություն ուսուցանող դպրոցներ։ Տիգրան Մեծի պալատում են եղել հույն նշանավոր հռետորներ Ամֆրիկատես Աթենացին և Մետրոդորոս Սկեպսիացին։ Վերջինս գրել է Տիգրան Մեծի պատմությունը, որը, սակայն, մեզ չի հասել[1]։ Այս և ուրիշ հույն երևելի մտավորականների գործունեությունը Հայաստանում իր բարերար հետքն է թողել նաև մեր հետագա պատմության մեջ։ Հայոց Արտավազդ թագավորը, Տիգրան Մեծի որդին, որ հայտնի է նաև որպես թատրերգակ և ողբերգակ դերասան, եղել է աչքի ընկնող բեմբասաց։ Նա շարունակել է իր հոր հելլենասեր քաղաքական գիծը և է՛լ ավելի առաջ մղել արվեստն ու մշակույթը։ Պլուտարքոսի վկայությամբ Արտավազդը գրել է նաև ճառեր և իր հոր նման հատել բազմաթիվ մետաղադրամներ։

Հռչակված հռետոր է եղել նաև հայ գիտնական Տիրանը, որին Լուկուլլոսը գերեվարել էր, տարել Հռոմ։ Այնտեղ նա ձեռք էր բերել մեծ համբավ։ Լինելով Ցիցերոնի մտերիմներից, Տիրանը դառնում է նրա գրադարանապետը, հռետորական դպրոցի ուսուցիչներից մեկը, աչքի ընկնում իբրև դասատու, բերական և մատենագետ։

Հայաստանում հռետորական արվեստի ուսումնասիրությունը համեմատաբար առավել հանգամանալից ուշադրության է արժանանում քրիստոնեության մուտքից և այն պետական գաղափարախոսություն դառնալուց հետո, երբ հայ միջնադարյան մշակույթը եղել է վաղ քրիստոնեական քաղաքակրթության միացյալ շղթայի մի օղակը։ Քրիստոնեությունը, իրոք, գաղափարական հեղաշրջման մի կարևոր շրջափուլ է մարդկության պատմության մեջ ու նաև Հայաստանում։ Եվ ինչպես լինում է ամեն մի նոր գաղափարախոսության հետ, III դարի վերջին և IV դարի սկզբին խիստ անհրաժեշտ էին քրիստոնեական կրոնի էությունն իմացող և այն մեկնաբանել կարողացող գրագետ մարդիկ։ Հեթանոսության դեմ մղվող դժվարին և արյունոտ պայքարում, երբ սրի հետ միասին խոսքն էր լուծում հաղթանակը, վիթխարի դեր է կատարել նաև հռետորների նոր սերունդը։ Ահա պատմական հենց այդ ժամանակաշրջանում հայ ժողովրդին, նրա պետականությանը հարկավոր էին կրթված, լուսավորյալ ու եռանդուն մարդիկ։ Միակ ճանապարհն արևատահմանի մեծ քաղաքների կրթօջախներում հայ պարմանիներին ուսուցման ուղարկելն էր։ Ու շատերն էին գնում Անտիոք, Աթենք, Հռոմ։ Ուսուցումն ավարտելուց հետո նրանք վերադառնում էին հայրենիք և լծվում ակտիվ գործի։ Լինում էին նաև չվերադարձողներ, որոնցից ոմանք, դառնալով ականավոր դեմքեր, ծառայում էին ընդհանուր քաղաքակրթությանը՝ իրենց անվամբ փառք ու պատիվ բերելով նաև հայ ժողովրդին։

Դրանցից մեկն է Պրոհերեսիոս Հայաստանցին՝ Պարույր Հայկազնը։

Հայ մատենագրության մեջ նրա մասին ոչ մի տվյալ չկա, անգամ անունը չի պահպանվել։ Թերևս դա նաև այն պատճառով, որ Պարույր Հայկազնը Հայաստանում չի գործել, կտրված է եղել մայր ժողովրդից։

---

1 Հակոբ Մանանդյան. Տիգրան Երկրորդը և Հռոմը. Երևան, 1972, էջ 85։

Հայ մատենագրությունը և նրա անբաժան մասը կազմող պատմագրությունն սկսվում են միայն V դարից, և մենք հայոց պատմության նախորդ շրջանի մասին տեղեկություններ ենք քաղում օտար աղբյուրներից։ Հետևաբար, հարկ չկա զարմանալու, որ Պրոհերեսիոսի պես խոշոր անհատականության մասին մեզ տեղեկություններ է տալիս միմիայն հունական մատենագրությունը, կոնկրետ պարագայում՝ հույն փիլիսոփա, պատմագիր և ճարտասան Եվնապիոս Սարդեսցին[2]։ Նա իր ժամանակի ականավոր դեմքերից է, զբաղվել է նաև գրական ստեղծագործությամբ, բնական գիտությունների ուսումնասիրությամբ։ Զ. Վ. Ուդալցովան նրան համարում է Պրոհերեսիոսի աշակերտը և համոզված հետևորդը, որը նրա ձեռքի տակ հասել է գիտության և արվեստի բարձունքներին[3]։ Պարույր Հայկազնի մասին որոշ տվյալներ են տալիս նաև Գրիգոր Նազիանզացին, Բարսեղ Կեսարացին, Գրիգոր Նյուսացին, Լիբանիոսը։

Եվ. չնայած Եվնապիոս Սարդեսցու գիրքը քանիցս հրատարակվել է բնագրի լեզվով (նաև հունարեն ու անգլերեն միասին), հագեցված գիտական ծանոթագրություններով, մեկնաբանություններով, տպագրվել է հատվածաբար նաև ռուսերեն, բայց հայերեն լույս չի տեսել։ Վաղուց հասունացել է Եվնապիոս Սարդեսցու գրքի, գլխավորապես դրա «Պրոհերեսիոս» հատվածի հայերեն գիտական հրատարակության պահանջը։

Իր աշխատության մեջ հույն պատմագիրը, հետևելով Պլուտարքոսի «Զուգահեռ կենսագրությունների» ավանդույթներին, տվել է ժամանակի մի շարք ականավոր մարդկանց, այդ թվում՝ Պլոտինի, Յամբլիքոսի, Հուլիանոսի, Հիմերիոսի, Պրոհերեսիոսի և այլոց կենսագրությունները, հարուստ տեղեկություններ ժամանակաշրջանի մասին։ Այդ դրքից մեզ համար պարզ է դառնում միջավայրի նկարագիրը, ծանոթանում ենք Պարույր Հայկազնի ուսուցչին, ուսանողական ընկերներին, գործընկերներին, հակառակորդներին, աշակերտներին և այլն։

Կենսագիր Եվնապիոս Սարդեսցին եղել է Պարույր Հայկազնի աշակերտը, սովորել է Աթենքում, նրա ճարտասանական դպրոցում։ Իր մեծ ուսուցչին առաջին անգամ տեսել է 362 թ., երբ Պարույր Հայկազնը արդեն շուրջ 90-ամյա ծերունի էր, իսկ ինքը՝ Եվնապիոս Սարդեսցին, 17 տարեկան պատանի. «Տեսի զնա, կրսէ Եւնաբի, ալևոր սպիտակահեր արծաթափայլ, անցեալ զութունևեօթն ամօք, որպես ինքն ասեր, բայց էր ժիր յոյժ՝ զորպիսի ալևոր չէր իմ տեսեալ երբեք, և համարեցայ զնա անմահ ոք»[4]։ Պարույր Հայկազնը ծրնվել է 275 թ. և մահացել 367 թ.։ Նա գտնվել է այն հասարակական-գաղափարական իրադարձությունների կենտրոնում, որոնց շնորհիվ հաղթանակեց քրիստոնեությունը, ձևավորվեցին դրա տեսական հիմունքները, ձևավորվեցին նաև Պարույր Հայկազնի աշակերտների՝ բյուզանդական գրականության հիմնադիրներ Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նազիանզացու ջանքերով։

Եվնապիոս Սարդեսցին իր ուսուցչի՝ Պրոհերեսիոս-Պարույր Հայկազնի մասին գրել է ոչ միայն նրան նվիրված հատվածում, այլև ակնարկել մյուս փիլիսոփաներին ու գործիչներին անդրադառնալիս։ Թվարկելով ժամանակաշրջանի նշանավոր մարդկանց, հույն պատմիչը տալիս է Աթենքի հռետորական դպրոցի տնօրեն Հուլիանոսի անունը, խոսում նրա աշակերտների մասին, առանձնացնում հատկապես Պարույր Հայկազնին և նրան անվանում «աստվածային Պրոհերեսիոս»։

Հույն պատմիչն ասում է, որ ինքը տեսել է Պրոհերեսիոսի ուսուցչի՝ Հուլիանոսի տունը, որ լցված էր մուսաների ոգով և ճարտասանության աստված Հերմեսով, ու այդ տունը շատ էր նման սրբավայրի։ Հուլիանոսն իր տունը

---

[2] Տե՛ս Philostratus and Eunapius. Cambridge, 1961.

[3] Античная древность и средние века. Вып. 10, Свердловск, 1973, с. 70.

[4] Գ. Զարբհանալյան. Հայկական հին դպրության պատմություն. Վենետիկ, 1897, էջ 263։

կտակում է Պրոհերեսիոսին։ Նրա տանը դրված էին նաև իր սիրելի աշակերտների քանդակները։ Գործնական, սքանչելի վերաբերմունք ուսուցչից՝ աշակերտին, Հուլիանոսից՝ Պրոհերեսիոսին։ Ուրեմն որքա՜ն մեծատաղանդ է եղել հայորդի սանը, որ օտարաչգի վարպետ հռետորը զավակի պես է վերաբերվել նրան, առանձնացրել իր մյուս սաներից և բարձր գնահատել։

Ուսուցիչ Հուլիանոսն Աթենք էր եկել Կապադովկիայից։ Ուշագրավ է, որ նրա բազմաթիվ սաների մեջ քիչ չէին նաև իր հայրենակիցները, որոնցից բոլորից շատ նա սիրում էր Պրոհերեսիոսին։ Եվնապիոսը պատմում է մի այսպիսի դեպք։ Փողոցում Հուլիանոսի հակառակորդ ուսուցիչ հռետորի սաները կռիվ են սարքում և մեղադրում Պրոհերեսիոսին ու նրա ընկերներին։ Գործը հասնում է դատարան։ Պրոկոնսուլը պահանջում է բացատրություններ ոչ թե ուսուցիչներից, այլ նրանց աշակերտներից։ Հակառակորդ ուսուցչի սաները հանպատրաստից ճառի ընդունակ չեն լինում և պետք էր, որ նրանք վաղօրոք պատրաստվեին ու նոր գնային դատարան՝ խոսք ասելու և նա առաջարկում է հետաձգել դատը։ Բայց Հուլիանոսի աշակերտները կարող էին հանպատրաստից ճառեր ասել և պաշտպանել սեփական գաղափարներն ու շահերը։ Եվ պրոկոնսուլի պահանջով նշանակ է ունենում Պրոհերեսիոս Հայաստանցին, որն էլ շահում է դատը։ Նրա հանպատրաստից ճառը բնութագրվում է որպես ատտիկյան նրբագեղ ու խորիմաստ ճարտասանության նմուշ։

Եվնապիոս Սարդեսցին պատմում է, որ Պարույր Հայկազնը, իր հերթին, ունեցել է շատ աշակերտներ, տարբեր երկրներից մարդիկ են եկել նրա մոտ ճարտասանական արվեստ սովորելու համար։ Նրա սաներից մեկը 361—363 թթ. դարձել է միապետ։ Դա Հուլիանոս կայսրն է, որ հայտնի է «Հուլիանոս Ուրացող» անունով։ Այս միապետը հեթանոս էր, ձգտում էր հաստատել անհետացող հեթանոսության իրավունքները և հալածում էր քրիստոնեությունն ու քրիստոնյաներին։ Բայց այդ դաժան տարիներին նա ձեռք չտվեց, չհետապնդեց իր ուսուցչին՝ Պրոհերեսիոսին, թողեց հռետորական դպրոցի տնօրենի իր պաշտոնում և նրան գրած նամակում ուսուցչին անվանեց հռետորության հորդառատ և անարգել մի գետ, որը մրցում է Պերիկլեսի հետ, երբեմն էլ գերազանցում նրան։ Ի դեպ, Պրոհերեսիոսին համեմատել են Հերմեսի, ինչպես նաև Ցիցերոնի հետ։

Հուլիանոս կայսրը նրան առաջարկում է իր արխիվային նյութերը՝ ժամանակաշրջանի պատմությունը գրելու համար։ Սակայն Պրոհերեսիոսը, չօգտվելով արտոնությունից, նույնիսկ հրաժարվում է իր գործից՝ հանուն քրիստոնեական դավանանքի, գտնելով, որ Հուլիանոս Ուրացողի հեթանոսական նկրտումները ժամանակավոր փոթորիկ են։ Սա ևս չափազանց տիպական մի փաստ է հօգուտ հայազգի ականավոր հռետորի և մտածողի։

Տասնհինգ դար անց, իմաստավորելով պատմական այդ ժամանակաշրջանը, Կարլ Մարքսը գրել է. «Այդ ուղղությունը, որին դեռ Հուլիանոս կայսրն էր պատկանում, գտնում էր, որ կարելի է ստիպել, որ բոլորովին չքանա իր համար ճանապարհ բացող ժամանակի ոգին,— հարկավոր է միայն աչքերը փակել՝ նրան չտեսնելու համար»[5]։

Փակագծերում նկատենք, որ որոշ ուսումնասիրողներ (Լ. Ա. Ֆրեյբերգ) Պրոհերեսիոս-Պարույր Հայկազնին համարել են հեթանոս հռետոր և մտածող[6]։ Սա, հարկավ, շփոթմունք էր, թերևս պայմանավորված Հուլիանոս Ուրացողին դասեր տալու և նրա կողմից հալածանքի չենթարկվելու փաստով և մեկ էլ նրանով, որ Պրոհերեսիոսի կենսագիրը հեթանոսության ջատագով Եվնապիոս Սարդեսցին է։ Լավ է, որ այժմ հստակություն է մտցված այդ խնդրում, նաև հենց նույն Լ. Ա. Ֆրեյբերգի կողմից, որը մեծ հիացմունքով է գրել Պրոհերեսիոսի մասին[7] որպես նաև քրիստոնեության ջատագովի։

---

5 Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը արվեստի մասին. հ. I, Երևան, էջ 361։

6 Տե՛ս Византийская литература. М., 1974, с. 29.

7 Տե՛ս Античность и Византия, М., 1975, с. 8—9, 17.

Պարույր Հայկազնի աշակերտներից են նաև, ինչպես ասվեց, բյուզանդական գրականության հիմնադիրներ Գրիգոր Նազիանզացին, Բարսեղ Կեսարացին, որոնք երկար տարիներ սիրով կապված են եղել իրենց իմաստուն, մեծահամբավ ուսուցչի հետ։ Նա է, որ բանավոր խոսքի ընթացքում իր ականավոր սաների մեջ զարգացրել է գեղարվեստական ճաշակ, իսկ, ինչպես հայտնի է, III—IV դդ. շատ էր ընդունված պոետական և արձակ խոսքերի միաձուլումը հռետորության մեջ մեծ ազդեցություն թողնելու համար։ Իսկ դա դաստիարակում էր նաև պոեզիայի ճաշակ։

Խոսելով Գրիգոր Նազիանզացու և Բարսեղ Կեսարացու մասին և շեշտելով, որ նրանք եղել են Պրոհերեսիոսի աշակերտներից, սովետական գրականագետ-բյուզանդագետները իրավացիորեն արձանագրել են. «Հույների հետ միասին բյուզանդական կուլտուրայի ստեղծողները եղան սիրիացիները և ղպտիները, հայերը և Վրաստանից սերվածները, չխոսելով արդեն Փոքր Ասիայի հելլենացված ժողովուրդների մասին»։ «Բյուզանդական ամբողջ կուլտուրան կանգնած է անտիկ և քրիստոնեական ավանդույթների դուալիզմի նշանի ներքո»[8]։

Այս կարծիքը լույս է սփռում ոչ միայն Գրիգոր Նազիանզացու, այլև նրա ուսուցիչ Պրոհերեսիոս Հայաստանցու վրա, որը քրիստոնյա էր. բայց հռետորության դասեր էր տալիս նաև հեթանոս աշակերտներին, այսինքն այնպիսի մեծ կուլտուրայի տեր մտածող էր, որ գիտակցում էր հեթանոսության և քրիստոնեության պայքարում վերջինիս անվերապահ հաղթանակը, բայց միաժամանակ գիտակցում էր ու արժեքավորում հելլենիստական մշակույթի մեջ եղած ամբողջ դրականը համայն քաղաքակրթության համար։ Թերևս նաև այդ ոգին էր, որ նրան զերծ պահեց ճակատագրական կործանումից, Հուլիանոս Ուրացողի հալածանքից և առիթ տվեց իր մյուս հեթանոս աշակերտին՝ Եվնապիոս Սարդեսցուն, գրելու նրա կենսագրությունը։ Սա արդեն իսկ չափազանց բնութագրական հանգամանք է։

Բյուզանդական պոեզիայի այդ կարկառուն դեմքը՝ Գրիգոր Նազիանզացին, համաշխարհային գրականության մեջ թողել է անջնջելի հետք։ Եվ կարևոր է արձանագրել այն, որ նա «ի խորոց սրտի խոսք» է ասել նաև իր ուսուցչի մասին, գրել է Պարույր Հայկազնի տապանագիր-մահախոսականը, որն օգտագործել է նաև Բաֆֆին իր «Պարույր Հայկազն» անավարտ վեպում։ Գ. Զարբհանալյանը նկատել է, թե Գրիգոր Նազիանզացին «իր խորունկ ու դարմանալի իմաստությունը՝ կերպով մը Պրոհերեսյա ջանիցն ու հանճարուն պարտական կը ճանչնա, ի մոտո զինքը ճանչցած ի մանկության, հասուն հասակին մեջ հետագա տողերը իրեն կը նվիրեր.

Այսուհետև Կեկրոպիան գլուխը բարձր պահելով թող չպարծենա,
Անընդունելի է, որ աղոտ լույսը իբրև ջահ համեմատել արեգակի հետ.
Ոչ իսկ Պրոհերեսիոսի հետ հռետորական պայքարի մեջ մտնել,
Որը ճարտասանական խոսքի հանդեսում նվաճեց ողջ երկիրը։
Ցանթերից՝ կարծիքներից սասանվեցին Ատտիկան
Եվ բոլոր մեծախոս իմաստակների սնապարծ կաճառը։
Տեղի տվեցին Պրոհերեսիոսին։ Տեղի տվեց նաև ինքը բախտը։
Անշքացավ Աթենքի պայծառ փառքը դառն օրհասից։
Այսուհետև փախեք Կեկրոպիայից, համբակ մանուկներ[9]։

Գրիգոր Նազիանզացու այս բանաստեղծության վերնագիրն է՝ «Ի Պրոյերեսիոսն իմաստակ (կամ՝ Սոփեստես)»։ Նկատենք, որ հայ գրողներն էլ փառաբանող բանաստեղծություններ ու ճառեր են ձոնել Գրիգոր Նազիանզացուն, թարգմանել նրա ստեղծագործությունները։

---

8 Византийская литература, с. 5—6.

9 Գ. Զարբհանալյան. Նշվ. աշխ., էջ 264 (բանաստեղծությունը գրաբարից թարգմանել է Ա. Զեյթունյանը)։

Պրոհերեսիոսի ժամանակակիցներից մեկ ուրիշը, հելլենիզմին սիրահարված հռետոր Լիբանիոսը, որն իր ճարտասանական դպրոցն է ունեցել և որտեղ ուսանել են նաև հայ աշակերտներ, ինչպես նաև վրացիներ, իր նամակներում գրում է, թե Պրոհերեսիոսը պերճախոսությամբ աշխարհն էր գրավում և արժանացել է արձանների, ունեցել է ազնիվ վարք։ Իսկ հռետորի համար բոլոր ժամանակներում գիտելիքներից ու խոսելու ձիրքից ոչ պակաս կարևոր է ազնիվ վարքը, առինքնող նկարագիրը, որը հավատ, վստահություն և սեր է ներշնչում նրա պաշտպանած գաղափարախոսության նկատմամբ։

Հին Հունաստանում ընդունված էր ականավոր հռետորներին և քաղաքական գործիչների կենդանության օրոք մեծարել դափնեպսակներով, կանգնեցնել նրանց արձանները։ Հույները այդպես են վարվել քչերի հետ, բայց վարվել են տեղին ու ճշմարտացի։ Այդպիսի պատվի ու փառքի է արժանացել Դեմոսթենեսը, որին անվանել են Հայր հայրենիքի, այդպես են վարվել Իսոկրատեսի հետ և այլն։ Դարեր անց այդ ավանդույթը շարունակվել է և Հռոմում։ Կենդանության օրոք հույները կանգնեցրել են Պրոհերեսիոս Հալաստանցու՝ Պարույր Հայկազնի բրոնզե արձանը, հետևյալ մակագրությամբ. «Քաղաքների թագուհի Հռոմը՝ ճարտասանության թագավորին» (Regina rerum Roma Regi Eloquentiae)։ Նրա ելույթները Ղեղել են բովանդակալից, մտքերով և հույզերով հարուստ, պատկերավոր, դիպուկ, տրամաբանական։ Հաճախ է խոսել ունկնդիրների առաջադրած թեմաների շուրջ։ Մեկ անգամ ունկնդիրները սղադրել են նրա ճառը, ապա խնդրել մեծ հռետորին կրկնել այն սկզբից մինչև վերջ, և նա կրկնել է նույնությամբ։

Հույները նրան անվանել են նաև Նոր Պերիկլես, որի շուրթերից հորդառատ գետի նման հոսում են պերճ ու իմաստուն մտքեր։ Սովետական գիտնականները (Մ. Ե. Գրաբար, Պասսեկ և այլք) ենթադրում են, որ Լիբանիոսը ևս որպես աշակերտ առնչվել է Պարույր Հայկազնի հետ, երբ իր ծննդավայր Անտիոքից ուսանելու եկավ Աթենք. «Այնտեղ էլ մեկնեց երիտասարդ Լիբանիոսը, իր հետ վերցնելով հորենական ժառանգության իր բաժինը և զինվելով «լավագույն սոփեստին» ուղղված երաշխավորագրերով, որի անունը, դժբախտաբար, նա չի տալիս (հավանաբար դա Պրոհերեսիոսն էր)»[10]։

Գ. Զարբհանալյանը դիտել է, որ Լիբանիոսը՝ «Պրոհերեսյա ժամանակցաց մեջ և քիչ մը իրմեն վերջ ալ՝ դարուն ամենեն անվանի իմաստակ և հռետորը», «իր նամակաց մեջ մեծ գովությամբ կը հիշե զՊրոհերեսիոս, և կը վկայե, թե նա պերճախոսությամբ աշխարհքը գրավեր է», «վարքովն ալ՝ ազնիվ անձ»[11]։

Բայց արդյո՞ք Պրոհերեսիոսը եղել է միայն երջանիկ մարդ, որի ճանապարհը հարթ է անցել Աթենքում և Հռոմում, առանց դիմադրության է հնչել նրա խոսքը այդ քաղաքների հրապարակներում։ Ո՛չ։ Նրան հալածել են ու նախանձել, երբ եղել է պարմանի, հալածել են ու նախանձել նրան, երբ երիտասարդ էր, հալածել են ու նախանձել, երբ հասուն այր էր ու աքսորել են Աթենքից, գցել աղքատության գիրկը։ Քաղաքական իրավիճակի փոփոխությունը ծանր է անդրադարձել նաև նրա վրա։ Երբ պատանի էր ու եկավ Աթենք, գրեթե մերկ էր ու քաղցած և քաղաքում զբոսնելու համար իր ընկերոջ հետ միասին փոխնիփոխ օգտվում էր միակ պատմուճանից։ Երբ խոր ծերունի էր, չափազանց անհանգիստ էր իր դուստրերի ճակատագրով։ Սակայն այդ ամենին նա դիմագրավել է իր մտքի և հավատի ու կամքի ամրությամբ։

Եվնապիոս Սարդեսցին պատմում է, որ բացի մտքի և խոսքի հզորությունից, նա բնությունից օժտված էր այլ բարեմասնություններով ևս։ Զափազանց գեղեցկատես էր ու հաղթահասակ, ուներ հրացայտ աչքեր, լայն ճակատ ու խիտ մազեր՝ սպիտակ ինչպես արծաթ կամ ծովի ալիքներ։ Խոր ծերության մեջ անգամ պահպանել էր իր հռետորության և մտքի ամբողջ ու-

---

10 История греческой литературы. Т. III. М., 1960, с. 291.

11 Գ. Զարբհանալյան. նշվ. աշխ., էջ 264—265։

ծը։ Հոգին տակավին երիտասարդ պահպանում էր հոգնած մարմինը. այդ մարդը, ինչպես ինձ թվում էր, չպետք է ծերանար և անմահ էր, շարունակում է Եվնապիոս Սարդեսցին։

Ցավոք պետք է արձանագրել, որ Պարույր Հայկազնի ստեղծագործությունները չեն պահպանվել, կամ ո՞վ գիտե, գուցե և պահպանվել են ու մեզ են անհայտ, թերևս ձուլվել են հույն հռետորների և իմաստասերների տեքստերին։ Բայց բարեբախտություն է այն, որ Պրոհերեսիոսի մեծանուն աշակերտներից Եվնապիոս Սարդեսցին գրել է նրա կենսագրությունը, իսկ Բարսեղ Կեսարացին և Գրիգոր Նազիանզացին իրենց խոսքն են ասել մեծանուն ուսուցչի մասին և իրենց հետքն են թողել նաև հայ իրականության մեջ և հայ մատենագրության վրա։ Ժամանակակից հայագետները (Մ. Ավդալբեկյան, Կ. Մուրադյան) հայ գեղարվեստական արձակի սկզբնավորմանը և գրական կապերին ու փոխազդեցություններին նվիրված աշխատություններում անդրադարձել են նաև նրա այս աշակերտների ստեղծագործությանը և առնչություններ տեսել։ Իսկ ռուս գրականագետները, երբ գրում են բյուզանդական մշակույթի մասին, անպայման տալիս են այդ գրականության երկու կարկառուն դեմքերի անունները, շեշտելով, որ նրանք սովորել են հայազգի հռետոր և նորպլատոնական փիլիսոփա Պրոհերեսիոսի՝ Պարույր Հայկազնի դպրոցում։

Հետևաբար, նախամեսրոպյան ժամանակաշրջանի հայ մշակույթի պատմության հարցերին անդրադառնալիս մենք չենք կարող չխոսել ականավոր հռետոր և փիլիսոփա-մանկավարժ Պրոհերեսիոսի՝ Պարույր Հայկազնի մասին։ Պարույր Հայկազնը եղել է հին աշխարհի մեծազույն հռետորներից, Դեմոսթենեսի և Ցիցերոնի գործի արժանավոր շարունակողներից մեկը, և ըստ էության՝ բյուզանդական հռետորական դպրոցի հիմնադիրների առաջին շարքերում, նաև գիտնական-տեսաբանների նշանավոր կադրեր է աճեցրել ու դաստիարակել։ Եվ չնայած հայ մատենագրության մեջ նրա մասին տրվյալներ չկան, սակայն նրա անձը մշտապես հետաքրքրել է հայ գիտնականներին ու գրողներին՝ Բաֆֆի, Գ. Շարբհանալյան, Ա. Սուքրյան, «Բազմավեպ», «Փորձ» ամսագրեր, ապա նաև՝ Վ. Ջալոյան, Ս. Արևշատյան, Գ. Խրլոպյան և ուրիշներ։ Խոսելով Պրոհերեսիոս-Պարույր Հայկազնի մասին, «Փորձ» հանդեսը գրել է. «...ո՞ւր են այժմյան Պրոհերեսիոսները, Խորենացիները, Եղնիկները, Դավիթները, ո՞ւր են մեր գիտության հերոսները...»։ Ցանկանալով հայրենասիրության նոր զարթոնք առաջացնել, ամսագիրը քննադատում է երիտասարդության շահամոլությունը, նրանց կոչելով հետևել հայոց մեծ նախնիների օրինակին[12]։ XIX դարի հայ մամուլի այսպիսի վերաբերմունքը սոսկ հայրենասիրությունից չի բխում, այլ, գլխավորապես, պայմանավորված էր հայոց փիլիսոփայության, ճարտասանության, մշակույթի ակունքների և օրինաչափությունների գիտական ուսումնասիրության շահերով։

Չպետք է մոռանալ, որ Պրոհերեսիոսի երիտասարդության տարիներին քրիստոնեությունը Հայաստանում դառնում է պետական կրոն, իսկ Պարույր Հայկազնը քրիստոնեության ջատագովներից էր այդ դարաշրջանում։ Եվ դժվար է կարծել, որ այսպիսի մի ականավոր հայորդուն չիմանային Հայաստանում, մանավանդ, քրիստոնեության առաջին հայ ջատագովները։ Չէ՞ որ Ագաթանգեղոսը, Կորյունը, Մովսես Խորենացին, Փավստոսը, Եղնիկ Կողբացին լավ են իմացել մեծ ճարտասանի ու իմաստասերի աշակերտներին՝ Գրիգոր Նազիանզացուն ու Բարսեղ Կեսարացուն. թարգմանել են նրանց երկերից, նույնիսկ կրել են նրանց որոշակի ազդեցությունը։ Այսպես, օրինակ, Նորայր Բյուզանդացին դիպուկ նկատել է, որ տասնյակ ընդհանրություններ կան Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Գրիգոր Նազիանզացու մի շարք ճառերի միջև, որոնք այսօր էլ կարևոր են սկզբնավորման շրջանի հայ մա-

12 «Փորձ». 1879, № 2, էջ 79։

ստեղծագրության վրա Նազիանզացու ճառերի ազդեցություններն ու հետքերը գնահատելիս[13]։ Հայագիտությունը նշել է, որ Գրիգոր Նազիանզացու ճառերի հետքը կա նաև Մովսես Խորենացու «Ողբի» վրա։ Իսկ «Ողբը» հայ վաղ միջնադարյան հռետորական արվեստի և հրապարակախոսության կոթողներից է և գրված է հենց բանավոր խոսքի սկզբունքներով։

Հայագիտության ուշադրությունից չի վրիպել Պրոհերեսիոսի և հայ իրականության այդպիսի միջնորդավորված կապը։ Շատերն են անդրադարձել դրան և տարբեր տեսանկյուններով։ Այսպես, Լեոն գրել է. «Պրոհերեսիոսը դուտ հույն գիտնական էր, երբեք չվերադարձավ իր հայրենիքը։ Բայց նրա ծագումը մեծ նշանակություն ունեցավ այն պատճառով, որ հայ ուսանողությունը ավելի բազմացավ Աթենքում և ազդեցիկ դեր կատարել սկսեց ուսանողական աշխարհում։ Ուսանողությունն այն ժամանակներն էլ բաժանվում էր ընկերակցությունների, որոնց հիմքը ազգայնական էր։ Հայ ուսանողական կազմակերպության հոգին Պրոհերեսիոսն էր և որովհետև սա, իբրև հռչակավոր գիտնական, ուներ շատ հակառակորդներ, հայ ուսանողությունը նրա պաշտպանության համար մղում էր եռանդուն պայքար, ուստի և հայտնի դարձավ իբրև մարտնչող, խիզախ արդարություն (ընդգծումը մերն է— Մ. Մ.)[14]։

Արշակ Ալպոյաճյանը, խոսելով IV դարի իմացական և կրոնական հարաբերությունների մասին՝ հռոմեական ազդեցության ոլորտների ընդարձակման ժամանակաշրջանում, անդրադարձել է Պարույր Հայկազնին, մասնավորապես նկատելով. «Բոլոր պոնտացիք և մերձակա գավառները—անշուշտ Հայաստանն ալ մեջն ըլլալով—աշակերտներ կը ղրկեին Պարույրին, իբր ծանոթի և իրենց մեջ համբավ ունեցող հռչակավոր մարդու։ Ասկե զատ բոլոր Փոքր Ասիայեն, Եգիպտոսեն և Լիբիայեն իր հանճարին վրա զմայլողներ դունտագունտ կը դիմեին Պարույրին, որուն փառքը ամեն կողմ կը տարածվեր»[15]։ «Բազմավեպում» Ա. Սուքրյանը նույնպես, Բարսեղ Կեսարացուն նվիրված հոդվածում արժեքավորում է նրա հայազգի մեծ ուսուցչի դերը ականավոր աշակերտներ պատրաստելու և դաստիարակելու գործում[16]։

Այսպիսով, հունական կրթություն ստացած և մայր հայրենիքից հեռու գործած հռետորը և փիլիսոփան, մանկավարժը և գործիչը փաստորեն մի նոր կամուրջ է դարձել հունական քաղաքակրթության ու Հայաստանի միջև։ Երբ Պրոհերեսիոս-Պարույր Հայկազնը իր փառքի զենիթում էր, տեսանելի էր շատ երկրներում, նաև իր հայրենիքում, որի պատմությունից և քաղաքակրթությունից նրան կտրելու իրավունք չունենք։ Նա չկտրվեց Հայաստանից նաև իր սաների և սրանց սաների միջոցով։

Նկատենք, որ արդի ռուս գրականագիտությունը նույնպես ըստ ամենայնի բարձր է արժեքավորում Պրոհերեսիոս-Պարույր Հայկազնի աշակերտների՝ Գրիգոր Նազիանզացու և Բարսեղ Կեսարացու ծառայությունները մասնավորապես հռետորական արվեստի զարգացման ուղղությամբ, որոնց աշխատությունները, ինչպես V դարում հայ իրականության մեջ, այնպես էլ IX—X դդ. ռուս իրականության մեջ եղել են առաջին թարգմանվող գրքերից[17]։

---

13 Կ. Մ. Մուրադյան. Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ. Երևան, 1983, էջ 6։

14 Լեո. Երկերի ժողովածու. հ. I, Երևան, 1966, էջ 426։

15 Արշակ Ալպոյաճյան. Պատմություն հայ Կեսարիո. հ. Ա, Գահիրե, 1937, էջ 278—279։

16 «Բազմավեպ», Վենետիկ, 1873, № 13։

17 История русской литературы X—XVII веков, под. ред. Д. С. Лихачева. М., 1980, с. 112.

Մեր այս խոսքը Պրոհերեսիոս-Պարույր Հայկազնի մասին եզրափակենք XIX դարի սաստակաշատ հայ գրական Գարեգին Զարբհանալյանի ձևակերպմամբ. Պրոհերեսիոսը «մեր ամենեն մեծ ճարտասան անձն է», «Հայկական ոգւոյն պարծանք անվանի անձր»։

ЗНАМЕНИТЫЙ РИТОР ДРЕВНЕГО МИРА ПРОЭРЕСИЙ—ПАРУЙР АЙКАЗН

М. Г. МЕЛКОНЯН

Резюме

Статья посвящена знаменитому ритору, философу-неоплатонику III—IV вв. Проэресию—Паруйру Айказну. Армянин по происхождению и выходец из Армении, Проэресий получил образование в Антиохии, Афинах и Риме. Он играл большую роль в общественно-политической и культурно-художественной жизни Византии, воспитал плеяду ораторов, писателей, государственных деятелей, выступал с речами в разных странах. Его учениками были император Юлиан Отступник, богословы Григорий Назианзин и Василий Кесарийский, ритор Либаний. Один из его учеников, философ Евнапий из Сард, который прославился как историк ранней Византии, написал также биографию Проэресия. Ему посвятил стихотворение Григорий Назианзин. При жизни Проэресия в Риме был поставлен его медный бюст с надписью: «Царица городов Рим—царю элоквенции». В статье отмечается также значение деятельности Проэресия и его учеников Григория Назианзина и Василия Кесарийского для развития армянской художественно-эстетической мысли и ораторского искусства.